

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 19-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1969—1970 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտներ բարեշնորհ Ղազարոս սրկ. Կյուրեղյանի, Կարպիս սրկ. Գալստյանի և Վարդան սրկ. Տեոլեքյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը և վկայականների հանձնումը:

Հանդիսությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տանն Կիլիկիայի՝ Անթիլիասի կաթողիկոսության միաբան տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը և տ. Տիրայր վրդ. Փանոսյանը:

Քննիչ հանձնաժողովի կազմում էին՝ ճեմարանի ավագ դասախոսներ Ա. Հատիտյանը, Կ. Ավետիսյանը, Պ. Շահբազյանը, Գր. Գյուլլանը և Ս. Անթոսյանը:

Ուսանողների ներկայացրած գրավոր ավարտաճառերը հանձնաժողովն արդեն քննել էր և գրավոր միջնորդություն հարուցել ճեմարանի տեսչությանը՝ նրանց բանավոր պաշտպանության թույլտվության համար:

Քննիչ հանձնաժողովի անդամ Ա. Հատիտյանը ըստ էության խոսում է ներկայացված ավարտաճառերի արժանիքների և թերությունների մասին:

Այնուհետև առանձին-առանձին խոսք է տրվում շրջանավարտ սարկավագներին, որոնցից յուրաքանչյուրը համառոտակի պատմում է իր կատարած աշխատանքի մասին և պատասխանում հանձնաժողովի անդամների հարցերին:

Բարեշնորհ Ղազարոս սրկ. Կյուրեղյանի ավարտաճառի նյութն է «Տարոնի սրբավայրերը», որը բաղկացած էր առաջաբանից և երեք գլուխներից, շուրջ 60 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատվում է «գերազանց»:

Բարեշնորհ Կարպիս սրկ. Գալստյանի ավարտաճառի նյութն էր «Հայ-ռուս եկեղեցական հարաբերությունները», որը բաղկացած էր առաջաբանից և հինգ գլուխներից, շուրջ 50 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատվում է «լավ»:

Բարեշնորհ Վարդան սրկ. Տեոլեքյանի ավարտաճառի նյութն է «Հովհաննես Երզնկացին որպես մատենագիր և երաժշտեսաբան», որը բաղկացած էր առաջաբանից և յոթ գլուխներից, շուրջ 60 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատվում է «գերազանց»:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը շնորհավորում է շրջանավարտների ավարտաճառերի հաջող պաշտպանությունը և խնդրում է Վեհափառ Հայրապետին՝ Իր օրհնությունը տալ՝ հանձ-

ելով նաև վկայականները:

Այնուհետև բարեշնորհ սարկավագները հերթով մոտենում են Վեհափառ Հայրապետին, համբուրում Նրա աջը և, ծափահարությունների ներքո, ստանում իրենց դիպլոմները:

Վերջում հայրական օրհնության ջերմ ու սրտառուչ խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ Իր բարձր գնահատության արժանացնելով հոգևոր ճեմարանում կատարված ուսումնա-դաստիարակչական աշխատանքները և, շնորհավորելով շրջանավարտ սարկավագներին, թելադրում է, որ այսուհետև էլ միշտ լինեն որքան հավատքի ու ծառայության, նույնքան և ուսման ու կրթության մշակներ, և իրենց երիտասարդական թարմ ուժերով կատարեն սպասը մեր եկեղեցուն և մեր հայրենիքին:

Հոգևոր ճեմարանի հարկի ներքո 1969—1970 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմային պաշտպանությանը նվիրված հանդեսը ավարտվում է հայրապետական «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով: